ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ժամը 20:30-ի դրությամբ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում
		Ընտրա-տարածք	Ընտրական տեղամաս				
1	http://www.hraparak.am/123280/	7	32	7/32 գրանցվել է ընտրողների խմբերի փոխադրում, կուտակումներ տեղամասից դուրս, ընտրողների ուղղորդում		Թիվ 7/32 ՏԸՀ նախագահ Արմեն Մանուկյան	ԸՕ-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից: ՏԸՀ նախագահը հայտնեց, որ ամեն ինչ հանդարտ է մինչև 50 մ շառավղով ոչինչ չի կատարվում և տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը
2	http://www.hraparak.am/123280/	13	36	13/36 տեղամասի (Նուբարաշենի 175 դպրոց) ընտրացուցակներում ընդգրկված են քաղաքացիներ, որոնց Երեւանի գրանցումը սկսվում է 2013 թ. փետրվարի 21 ից:		Թիվ 13/36 ՏԸՀ նախագահ Գագիկ Կոլոտյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
3	Զանգվածային լրատվության միջոց	12	34	12/34-ում ընտրացուցակում ընդգրկված մարդուն հանձնաժողովի ՀՀԿ-ական անդամները չեն թողում քվեարկի՞		Թիվ 12/34 ՏԸՀ նախագահ Կիրակոսյան Աշոտ	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, տեղամասային կենտրոն ներկայացած ընտրողը մասնակցել է քվեարկությանը ԸՕ-ով սահմանված կարգով: Քվեարկելուց հետո ՕԵԿ վստահված անձը առարկություն է ներկայացրել այն մասին, որ ընտրողը հաշվառված է ընտրությունները նշանակվելուց հետո , սակայն նշված հանգամանքը չի կարող ընտրողին քվեարկելու իրավունքից զրկելու հիմք հանդիսանալ: ՏԸՀ պարտավոր է ապահովել ընտրողների ցուցակում ընդգրկված և քվեարկության ներկայացած յուրաքանչյուր ընտրողի ընտրելու իրավունքը

4	http://www.ilur.am/news/view/13101.html	9	3	Կենտրոն վարչական շրջանում տեղակայված 9/03 տեղամասի հանձաժողովի նախագահ, Հանրապետական կուսակցությունը ներկայացնող Գալուստ Սարգսյանը հարբած է ներկայացել ընտրատեղամաս, երբ հանձնաժողովի անդամները դիտողություններ են անում, «դեբոշ» է անում, գոռգոռում է: Հանձնաժողովի Հայ ազգային կոնգրեսը ներկայացնող անդամը դիմել է Կոնգրեսի շտաբ, որպեսզի իրավիճակի մասին տեղյակ պահեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:		Թիվ 9/3 ՏԸՀ նախագահ Գալուստ Սարգսյան, <<Տնտեսական և սոցիալական իրավունքների կենտրոն>> ՀԿ դիտորդ Արա Պողոսյան	Տեղեկատվությունը կայքում հայտնվելուց անմիջապես հետո թիվ 9 ԸԸՀ նախագահ Եղիշ Տերտերյանը այցելել է տեղամաս և հայտնում է, որ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, նույնը փաստում է նաև <<Տնտեսական և սոցիալական իրավունքների կենտրոն>> ՀԿ դիտորդ Արա Պողոսյանը
5	Զանգվածային լրատվության միջոց	10	1	10/1 Ընտրատեղամասում ժամը 09:50-ի դրությամբ հոսանքազրկվել է ընտրատեղամասը, որի պատճառով դադարեցրել են ընտրությունները, քանի որ ընտրատեղամասը մութ է և ընտրություն անցկացնելը հնարավոր չէ: Այժմ ընտրությունները անցկացվում են մոմի լույսի տակ: Հարմոնիա ՀԿ, Էդուարդ Ղուդրդունց		Թիվ 10/1 ՏԸՀ նախագահ Հայկազ Հակոբյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ ներկա պահին տարվում են համապատասխան աշխատանքներ խնդիրը վերացնելու համար, իսկ ներկա պահին աշխատում են մարտկոցի օգնությամբ
6	Զանգվածային լրատվության միջոց	7	28	7/28 տեղամասում՝ 11 դպրոց, Լոուկաշին փ., ընտրողին աջակցող/օգնող անձին հանձնաժողովի անդամները հարժարվել են գրանցել մատյանում, սակայն դիտորդի զգուշացումից հետո, գրանցել են օգնողին գրանցամատյանում:		Թիվ 7/28 ՏԸՀ նախագահ Ծովինար Օսմանյան, <<Էրեբունի>> ՀԿ դիտորդ	ՏԸՀ նախագահի և <<Էրեբունի>> ՀԿ դիտորդի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

7	Զանգվածային լրատվության միջոց	11	14	«Հայտրանսշին» գործարանի 11/14 ընտրատեղամասի կողքի բակում էլ կուտակումներ են, մարդկանց հավաքում եւ բերում են տեղամաս: Հանրապետական կուսակցությունը ներկայացնող Դավիթ Վարդանյանը տեղամասից դուրս է գալիս եւ մարդկանց ուղղորդավորված տանում քվեարկության:		Թիվ 11/14 ՏԸՀ նախագահ Լուսինե Վարդանյան	ԸՕ-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից: ՏԸՀ նախագահը հայտնեց, որ ամեն ինչ հանդարտ է մինչև 50 մ շառավղով ոչինչ չի կատարվում և տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը
8	Զանգվածային լրատվության միջոց	9	28	09/28 տեղամասում՝ Նորգյուղ, թաղի տղերքը լցվել են տեղամաս, հայտարարել, որ դուրս չեն գալու՝ ինչ էլ անեն եւ թելադրում են ընտրողներին՝ ինչն ինչպես անել, հանձնաժողովի նախագաը անկարող է կարգավորել իրավիճակը		Թիվ 9/28 ՏԸՀ նախագահ Ռազմիկ Քոչարյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
9	Զանգվածային լրատվության միջոց	13	24	13/24 տեղամասում՝ Չուխաջյան երաժշտական դպրոց, Ռոստոմյան փ., մարդկանց կուտակումներ են, ուղղորդված քվերակություն է ընթանում, լարված վիճակ է, նոր անձնագրեր կան բազմաթիվ, որ տրվել են 2013 թվականին		Թիվ 13 ԸԸՀ նախագահ Արայիկ Մատինյան	Տեղեկատվությունը ստանալուց անմիջապես հետո թիվ 13 ԸԸՀ նախագահ Արայիկ Մատինյանը այցելել է տեղամաս, որից հետո մեզ հայտնեց, որ տվյալ պահին ընտրողների քանակը շատ է եղել և նշված իրավիճակը կարգավորել է ՏԸՀ-ում հեթապահություն իրականացնող գտնվող ոստիկանը, իսկ անձնագրերի մասով հայտնեց, որ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
10	Զանգվածային լրատվության միջոց	2	32	Քաղաքացի Արևիկ Բաղալյանը ահազանգում է, որ 2/32 ընտրատեղամասում որ ընտրատեղամասի դրսում՝ միջանցքում կուտակումներ են, մարդիկ հերթ չէին կարողանում պահել, ով ցանկանում էր մտնում էր ներս՝ մի քաղաքացի գալիս ասում էր, որ մայրս նոր է վիրահատված, թողեք թող անցնի, մյուսը մի այլ պատճառաբանությամբ էր ներս մտնում: Ընտրատեղամասում 15 մարդ կար կամ նույնիսկ ավելին:		Թիվ 2/32 ՏԸՀ քարտուղար Լաուրա Ալեքսանյան, ՀԱԿ կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված ՏԸՀ հանձնաժողովի անդամ Արտաշես Մելտոնյան	ՏԸՀ քարտուղարի և հանձնաժողովի անդամի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

11	Զանգվածային լրատվության միջոց	5	20	5/20 տեղամասում կան կուտակումներ՝ 25-ից ավելի մարդ: Անհայտ անձիք, թաղային հեղինակություններ գտնվում են տեղամասում, շրջում եւ ուղղորդում ընտրողներին: Դիտորդ Կարեն Վարդանյանը ահազանգում է, որ «Յու-Քոմ» ընկերությունը իր աշխատակիցներին հրահանգել է ընտրել Տարոն Մարգարյանին:		Թիվ 5/20 ՏԸՀ նախագահ Անահիտ Նազլոյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ ընտրողների թվաքանակը շատ լինելու պատճառով կուտակումներ եղել են, բայց կանխվել են հանձնաժողովի անդամների կողմից:
12	Զանգվածային լրատվության միջոց	13	27	Վարդաշենի 13/27 ընտրատեղամասում քվեատուփի մոտ նստող հանձնաժողովի անդամը ընտրողներից մեկի մոտ հայտնաբերել է երկու ծրար: Ավելի ուշ պարզ է դարձել, որ երկու ծրարում էլ քվեարկած քվեաթերթիկ էր:		Թիվ 13/27 ՏԸՀ նախագահ Հայկ Մկրտչյան	Նշված տեղեկությունը ճշգրտվել է ՏԸՀ-ից: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ հայտնաբերված երկու ծրարները անհապաղ մարվել են և փաստի վերաբերյալ կազմվել է արձանագրություն
13	Զանգվածային լրատվության միջոց	12	11	12/11 տեղամասում՝ 140 դպրոց, Նորագավիթ, ընտրողներին են տանում բերում տեղամաս, մարդկանց շարունակական կուտակումներ են դիտարկվում:		Թիվ 12/11 ՏԸՀ նախագահ Արամ Հայրապետյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
14	Զանգվածային լրատվության միջոց	3	6	3/06 ընտրատեղամասում դրսից մարդիկ են մտել եւ ստիպողաբար քվեարկել են տալիս տեղամաս մտած ընտրողներին: Հանձնաժողովի նախագահը ոստիկանության միջոցով փորձում է ճնշում գործադրել ՀԱԿ-ի ու ՀՅԴ-ի վստահված անձանց վրա:		Թիվ 3/06 ՏԸՀ նախագահ Արշավիր Բաբայան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, վերջինս հայտնեց, որ առավոտյան եղել են կուտակումներ, որը ՏԸՀ -ում հերթապահություն իրականացնող ոստիկանի աջակցությամբ կարգավորվել է:
15	Զանգվածային լրատվության միջոց	13	30	13/30 տեղամասում գրանցամատյանը ոստիկանությունը տարել է դուրս քվեասենյակից՝ ուսումնասիրման պատճառաբանությամբ, ապա՝ վերադարձրել:		Թիվ 13/30 ՏԸՀ նախագահ Սոնա Սեքսենյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ, քանի որ ոստիկանը իրավունք չունի գտնվելու քվեարկության սենյակում, քարտուղարի կողմից գրանցամատյանը դուրս է բերվել՝ դրանում արձանագրված խախտման փաստի վերաբերյալ գրառումից քաղվածք կատարելու համար: ՏԸՀ-ին պարզաբանվել է, որ գրանցամատյանից պետք է ՏԸՀ քարտուղարը քարդված կատարեր և տրամադրեր ոստիկանության աշխատակցին:
16	http://www.lurer.com/?p=97924&l=am	2	30	2/30 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամներից մեկը քաղվածք է կատարում ստորագրված ցուցակներից եւ տրամադրում է այդ տեղեկատվությունը տեղամասից դուրս անհայտ մեկին:		Թիվ 2/30 ՏԸՀ նախագահ Սիրանուշ Պետրոսյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նման միջադեպ եղել է առավոտյան ժամը 11:00 սահմաններում, որը նկատել է հանձնաժողովի նախագահը և որն անմիջապես կանխվել է վերջինիս կողմից: Մինչ այս պահը նմանատիպ միջադեպ չի գրանցվել:

17	Զանգվածային լրատվության միջոց	2	4	Նոր Նորքի 2/4 ընտրատարածքում ընտրողը քվեարկելուց հետո հրաժարվեց, որ իր անձնագրում կնիք դրվի՝ քվեաթերթիկը քվեատուփ գցելուց առաջ: Քաղաքացին հանձնաժողովի անդամների հետ վիճաբանեց, որից հետո հանձնաժողովի նախագահը արգելեց քվեարկել:		Թիվ 2/4 ՏԸՀ նախագահ Ալվիտա Մելքոնյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նման միջադեպ եղել է, ընտրողը թույլ չի տվել, որ իր անձնագրում կնիք դրվի, հանձնաժողովի նախագահը վերցրել է քվեաթերթիկը տվյալ ընտրողի ձեռքից և բոլորի ներկայությամբ մարել այն: Այսինքն, հանձնաժողովի նախագահի գործողությունները իրավաչափ են և բխում են ԸՕ-ի 66-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:
18	Զանգվածային լրատվության միջոց	10	24	«Ժառանգություն» կուսակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամ Սուսաննա Մուրադյանն ահազանգում է, որ 10/24 տեղամասում նկատվում են մարդկանց կուտակումներ:		Թիվ 10/24 ՏԸՀ նախագահ Վոլոդյա Հովհաննիսյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
19	Զանգվածային լրատվության միջոց	12	27	12/27 տեղամաս՝ թիվ 64 մանկապարտեզ, Ավանեսով փ., եկած ընտրողը չի կարողացել քվեարկել, քանի որ նրա անվան դիմաց լրացված է եղել, նախագահը հրաժարվել է գրանցել խախտումը՝ պատճառաբանելով, որ մատյանում տեղ չկա:		Թիվ 12/27 ՏԸՀ նախագահ Ինևա Դավթյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված միջադեպը հարթվել է և ընտրողը իրականացրել է օրենսդրությամբ իրեն վերապահված իր ընտրելու իրավունքը:
20	Զանգվածային լրատվության միջոց	3	19	Նոր Նորքի յոթերորդ զանգվածում գտնվող 3/19 ընրատեղամասում ոմն քաղաքացի փորձել է ընտրություն կատարել՝ չլինելով տվյալ ընտրատարածքի ընտրող: Նա ստորագրել է այլ անձի անվան դիմաց և կատարել իր ընտրությունը:		Թիվ 3/19 ՏԸՀ նախագահ Կարեն Բաղոյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նման դեպք եղել է , հանձնաժողովի նախագահը նկատել է, վերցրել քվեաթերթիկը ընտրողի ձեռքից և բոլորի ներկայությամբ մարել է այն: Քարտուղարի կողմից այդ կապակցությամբ կազմվել է արձանագրություն:
21	Զանգվածային լրատվության միջոց	1	10	Ավանի 1/10 ընտրատեղամասում քաղաքացին քվեաթերթիկը դուրս է բերել տեղամասից:		Թիվ 1/10 ՏԸՀ նախագահ Ազատ Հակոբյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
22	http://www.hraparak.am/123587/	13	15	13/15 տեղամասում՝ թիվ 194 դպրոց, Նոր Արեշ, Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ ձայների ամփոփման ժամանակ պետք է անջատված լինեն բոլոր բջջային հեռախոսները՝ հղում անելով, որ սույն կարգադրությունը եկել է ԿԸՀ-ից:		Կենտրոնական ընտրական հանձնաժողով	Տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, որպեսզի չխաթարվի ընտրության արդյունքների ամփոփման գործընթացը, այդ իսկ պատճառով ԿԸՀ-ն նման կարգադրություն է արել:

23	Զանգվածային լրատվության միջոց	4	23	iLur.am-ն ահազանգ է ստացել, որ Քոչարի փողոցի վրա գտնվող 4/23 ընտրատեղամասում քաղաքացիներից մեկին միանգամից երկու քվեաթերթիկ են տվել: Նույն տեղամասում պարզվել է, որ ցուցակում հայտնվել է 70 հոգի, որոնք Երևանի գրանցում են ստացել ընտրության օրը նշանակելուց հետո և, համաձայն Ընտրական օրենսգրքի, ընտրելու իրավունք չունեն: Հանձնաժողովի ՀՀԿ-ական նախագահը հրաժարվել է արձանագրություն կազմել:⍰		Թիվ 4/23 նախագահ Պրազյան Աշոտ, <<Բարև Երևան>> կուսակցությունների դաշինքի հանձնաժողովի անդամ Սահակ Շինոյան, ՀԱԿ կուսակցությունների դաշինքի հանձնաժողովի անդամ Արմինե Պետրոսյան, ՀՅԴ կուսակցության վստահված անձ Միհեր Տեր-Գրիգորյան	Նշված անձանց հաղորդմամբ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:
24	www.asparez.am	7	14	07/14 տեղամասում՝ 80 նախակրթարան, ՀՀԿ երկու ներկայացուցիչներ միաժամանակ գտնվում են տեղամասում եւ հրամաններ տալիս հանձնաժողովի անդամներին: Նախագահը հրաժարվում է արձանագրել այս խախտումը:		թիվ 7/14 ՏՀՀ նախագահ Պողոսյան Առնակ	7:00-ին նեկայացել են ՀՀԿ 2 վստահված անձ: Ժամ 8:00-ից ՏՀՀ-ում ներկա են յուրաքանչյուր կուսակցությունից մեկական վստահված անձ և խախտում առկա չէ:
25	http://www.asparez.am/	13	30	13/30 տեղամասում՝ 107 դպրոց, հանձնաժողովի քարտուղարը հրաժարվում է գրանցել խախտման վերաբերյալ դիտորդի մեկնաբանությունը:		նախագահ Սոնա Սեքսսենյան	ՀՀ ԸՕ 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները, իսկ
26	http://www.asparez.am/	12	22	12/22 տեղամասում՝ 142 նախակրթարան, տնտեսական եւ սոցիալական իրավունքի կենտրոն ՀԿ-ի տեղական դիտորդը ներկայանում է որպես ՀՀԿ ներկայացուցիչ: Դիտորդը ձայնագրել է զրույցը: Հանձնաժողովի նախագահը հրաժարվում է կազմել արձանագրություն:		12/22 ՏՀՀ նախագահ Խաչատրյան Սոնա	տնտեսական եւ սոցիալական իրավունքի կենտրոն ՀԿ-ից ներկա է տեղական դիտորդ Սարգիս Միքաելյանը, իսկ ՀՀԿից ներկա է վստահված անձ Մարտին Բաբայանը: Տեղմասային կենտրնում ներկա լինելու իրանունք տրվեցրոր անձինք վան
27	http://www.asparez.am/	7	5	07/05 ԶԼՄ ներկայացուցչին փորձել են խոչընդոտել ներկա գտնվել եւ հետեւել քվեարկության ընթացքին:		07/05 ՏՀՀ նախագահ Ազիզյան Ռուզաննա	ԸՕ-ի համաձայն պահանջվել է գրանցվել և այս պահի դրությամբ՝ 9:45, տեղմասային կենտրոնում են գտնվում Կենտրոն, 168 ժամ և այլ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, դիտորդներ, որոնք առանց խոչընդոտի իրականացնում են իրենց իրավունքները

28	http://www.asparez.am/	13	25	13/25 տեղամասում (Նոր Արեշի թիվ 69 մանկապարտեզ), հանձնաժողովի նախագահը մոռացել է բերել ծրարների վրա դրվող կնիքը, արդյունքում 36 քվեաթերթիկներ նետվել են քվեաթուփ առանց կնքելու:			Նշված փաստն արձանագրվել է ընտրական հանձնաժողովի կողմից և հաշվի կառնվի տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելիս
29	http://www.asparez.am/	6	1	Աջափնյակ վարչական շրջանի 6. 01 ընտրատեղամասում վաղ առավոտից նկատվում էին կուտակումներ: «Բարև Երևան» դաշինքի վստահված անձն այդ կապակցությամբ աղմուկ բարձրացրեց ընտրատեղամասում, ինչի պատճառով վեճ առաջացավ նրա և հանձնաժողովի անդամների միջև: Բացի այդ, նույն ընտրատեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանիների համամասնական ցուցակում ընդգրկված Գրիգոր Գրիգորյանը պարբերաբար ելումուտ էր անում տեղամաս (արգելվում է օրենքով), ինչն առաջացնում էր հանձնաժողովի նախագահի զայրույթը:		նախագահ Լուսիկ Միքայելյան	Այն որ վեճ է եղել դա իրականությանը չի համապատասխանում, իսկ այն բողոքին որ Գրիգոր Գրիգորյանը պարբերաբար մուտք է գործում դա իրականությանը համապատասխանում է և նախագահը դիմել է ոստիկանին և վերջինիս դուրս են հրավիրել
30	http://www.1in.am/arm/armenia_politics_181272.html	8	5	8/05 տեղամսում՝ 90 դպրոց, անձնագրում դրվող կնիքների հետ կապված խնդիրներ են արձանագրվել:			ՏՀՀ-ից պահանջվել է հատուկ թանաքանյութ օգտագործել դրա տեխնիկական պայմանների պահպանմամբ, որի պարագայում հատկացված թանաքանյութը պահպանվում է և չի գունաթափվում
31	http://www.asparez.am/	7	34	07/34 տեղամասում՝ 37 մանկապարտեզ, Սիլիկյան թաղամաս, ընտրակաշառք են բաժանում:		նախագահ Հերմինե Հայրապետյան	չի համապատասխանում իրականությանը
32	http://www.1in.am/arm/armenia_politics_181276.html	1	27	Միջադեպ 1/27 ընտրատեղամասում՝ հանձնաժողովի նախագահը հրաժարվել է գրանցել խախտումը		նախագահ Հերմինե Խաչատրյան	Ներկայացված հաղորդագրությունից պարզ չէ ինչ խախտման մասին է խոսքը: ՏՀՀ նախագահի հաղորդմամբ տեղամասում ներկա ՀԱԿ-ի վստահված անձը կանգնած լինելով գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գլխավերևում խանգարել է նրա աշխատանքին: Հանձնաժողովի նախագահը խնդրել է վստահված անձին զբաղեցնել օրենքով՝ ԸՕ 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն իրեն հատկացված աշխատատեղը և առանց հանձնաժողովի աշխատանքներին խանգարելու իրականացնել իր իրավունքները

33	http://www.emedia.am/hy/1367731497	13	26	13/26 ընտրատեղամասում՝ Հաստոցանորմալ գործարան, Մահարու փ., 1, տեղակայված է տարածքում (գործարան), բացակայում է սանհանգույցը, քվեասենյակով ելումուտ են նշված տարածքում ապրող բնակիչներ:			
34	http://www.1in.am/arm/armenia_politics_181276.html	1	8	01/08, Ավան –ՔՀԻ դիտորդը հայտնում է, որ մի կին, դռների արանքում կանգնած, մարդկանց ուղղորդում է: Հանձնաժողովի նախագահն ասում է, որ նա ընտրող է, սակայն այդ կինը չի մոտենում գրանցվելու և քվերակելու համար, դռների մոտ կանգնած մարդկանց է «դիմավորում»:		Մանուչարյան Առնակ	ՏՀՀ նախագահի հաղորդմամբ տեղամասում ներկա են ԲՀԿ, ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, ՀԱԿ մեկական վստահված անձ Ազատություն, Կենտրոն և այլ ԶԼՄ ներկայացուցիչներ, դիտորդներ և տեղամասում ներկա լինելու իրավունք չունեցող անձինք տեղմասային կենտրոնում և քվեարկության սենյակում ներկա չեն
35	http://www.galatv.am/news/view/%D1%82%D1%825886.html	13	12	13/12 տեղամասի դիմաց ոստիկանների կուտակումներ են: (17 դպրոց, Սասունցի Դավիթ փ.,): Ոստիկաններն անարգել ելումուտ են անում ընտրական տեղամաս եւ ուղղորդում են ընտրողներին: Հանձնաժողովի նախագահը բանավոր կերպով նկատողություն է անում ոստիկաններին, սակայն հրաժարվում է արձանագրություն կազմել:		նախագահ Երանուհի Հարությունյան	դա իրականությանը չի համապատասխանում
36	http://www.asparez.am/news-hy/yerevan-10-11am/	8	8	08/08 տեղամասում՝ 179 դպրոց, Օհանով, փ., Ա-3 թաղ., մի քանի հանրապետականներ լցվել են ներս պահանջում են ԶԼՄ ներկայացուցիչ Կարեն Հարությունյանին եւ դիտորդ Ռուզան Գրիգորյանից՝ դուրս գալ տեղամասից, տեսախցիկի լիցավորող սարքը գողացել են՝ հարձակվել են դիտորդի վրա, սկսել են սպառնալ, հայհոյել են վերջինիս:		նախագահ Արտյոմ Խաչատրյան	
37	http://www.asparez.am/	7	29	07/29 տեղամասում՝ 146 դպրոց, Լուկաշինի փ., երեք ընտրողներ քվեարկությանը մասնակցել են 9-րդ ձեւով (անձնագրի փոխարինող փաստաթուղթ): Ընդ որում որեւէ հիմք 9-րդ ձեւ ստացման վերաբերյալ չի ներկայացվել:			ՀՕ-ի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անձը հաստատող փաստաթուղթ է համարվում անձնագիրը (առանց կենսաչափական տվյալների), նույնականացման քարտը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից:

38	http://henaran.am/news_view.php?post_id=22544	6	3	Վիճաբանություն Աջափնյակի 6/3-ի ընտրատեղամասում		նախագահ Ծովինար Օսմանյան, դիտորդ Արմեն Բաղդասարյան և Սարգիս Հարությունյան	Վստահված անձը ծանոթացել է ընտրական օրենսգրքով սահմանված հոդված 33-ին "Վստահված անձի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները", ընդունել է իր սխալը և միջադեպը կանխվել է:
39	http://www.asparez.am/	13	15	13/15 տեղամասում, 194 դպրոց, Նոր Արեշ, հանձնաժողովի նախագահի կարճատեւ բացակայության ընթացքում տեղամասում ստեղծվել է անկառավարելի իրավիճակ, տեղամասում ներկա են անհայտ անձինք:		նախագահ Արմինե Վարդանյան, ՀԱԿ-ի անդամ՝ Տիգրան Հարությունյան, Ժառանգության անդամ Արմեն Ալավերդյան	տվյալ ինֆորմացիան կեղծիք է և իրականությանը չի համապատասխանում
40	http://www.asparez.am/	7	28	07/28 տեղամասում՝ 111 դպրոց, Լուկաշին փ., արձանագրվել է երկու հոգով քվեախցիկ մտնելու երկու դեպք, որոնցից վերջինը գրանցվել է հանձնաժողովի կողմից: Մինույն ժամանակ «Էրեբունի» համայնքների զարգացման կենտրոնի դիտորդ Արմեն Բաղդասարյանը եւ «Կյանք» մարդու իրավունքների, քաղաքականության եւ հումանիտար պրոբլեմների միջազգային ասոցիացիայի դիտորդ Սարգիս Հարությունյանը ուղղորդում են ընտրողներին, ելումուտ են անում, դրսից ընտրողներ են ուղեկցում ընտրատեղամաս:		նախագահ Ծովինար Օսմանյան, դիտորդ Արմեն Բաղդասարյան նՍարգիս Հարությունյան	տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը
41	http://www.epress.am/2013/05/05/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1.html	13	27	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը հայտնում է, որ Վարդաշենի թիվ 67 մանկապարտեզում տեղակայված 13/27 ընտրատեղամաս է մուտք գործել ՀՀԿ անդամ ներկայացած Զավեն Սարգսյանը, հարբած վիճակում հայհոյել և սպառնացել է դիտորդներին, որից հետո նրան են միացել սպառնալիքներով ևս մի քանի անհայտ անձինք: Առկա են մեծ կուտակումներ և իրավիճակը տեղամասում անվերահսկելի է:		13/27 ՏՀՀ նախագահ Մկրտչյան Հայկ	ՏՀՀ նախագահի և 13/27 ՏՀՀ-ում ՀԱԿ դաշինքի կողմից նշանակված անդամ Հրանտ Ալեքսանյանի պնդմամբ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը

42	http://www.asparez.am/news-hy/yerevan-13-14pm/	13	30	13/30 տեղամասում՝ 107 դպրոց, Զրաշեն, նույն անձանց կողմից բազմակի քվեարկություններ են դիտարկել դիտորդները, փորձում են հայհոյել եւ ահաբեկել դիտորդներին, հանձնաժողովի նախագահը մերժում է գրանցել դիտարկված խախտումները, ընտրողների ուղղորդում եւ անօրինական օժանդակություն են ցուցաբերում:		13/30 ՏՀՀ նախագահ Սոնա Սեքսենյան, ''Հակակոռուպցիոն կենտրոն'' ՀԿ դիտորդ Լալա Արծվիկյան	Նամանատիպ դեպքեր չեն հարուցվել, միայն կուտակուներ են եղել, որը ոստիկանների միջամտությամբ կանխվել է:
43	http://www.a1plus.am/am/politics/2013/05/05/vardan-harutyunyan	11	36	Հանրապետական կուսակցության վստահված անձ՝ ոմն Արտյոմ, այսօր հարձակվել է ՀԱԿ վստահված անձ Վարդան Հարությունյանի վրա: Դեպքը տեղի է ունեցել Էրեբունու11/36 ընտրատեղամասում: Տեղամասը գտնվում է թիվ 49 դպրոցում:		11/36 ՏՀՀ նախագահ Ներսիսյան Սեդա	ՏՀՀ նախագահի հաղորդմամբ որևէ "հարձակում" տեղի չի ունեցել: ՀՀԿ վստահված անձը ներկայացել է տեղամասային կենտրոն, սակայն ՏՀՀ-ն վերջինիս չի գրանցվել, քանի որ նա վկայականի հետ չի ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ: Նշվածով պայմանավորված այդ վստահված անձին խնդրել են դուրս գալ տեղամասից:
44	http://www.asparez.am/	13	17	13/17 տեղամասում՝ 43 դպրոց, Նոր Արեշ, հանձնաժողովի անդամները պահանջում են դիտորդներին ցույց տալ նկարահանված նյութերը, որակելով նկարահանումն որպես անօրինական գործողություն:		13/17 ՏՀՀ նախագահ Վիսկրյան Հակոբ	ՏՀՀ նախագահը տեղեկացրեց, որ վստահված անձի դիմել է իրեն, որ ԻՀԿ տեղական դիտորդ Արեն Ավագյանը տեսանկարահանում է ընտրողների ցուցակները, որպիսի փաստը ստուգելու համար հանձնաժողովը նայել է դիտորդի կողմից նկարած տեսանյութը, և փաստել,որ ընտրողների ցուցկները չեն տեսանկարահանվել: Նույն դիտորդը, մոտեցել է քվեախցիկներին, այն բարձրացրել, քանի որ ընտրողի հայտարարեց, որ իրեն ծրար չի հատկացվել: ՏՀՀ-ն դիտորդին բացատրեց ԸՕ-ի 31-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները, պարտականությունները և խնդրեց իր իրավունքներն իրականացնել օրենքի շրջանակներում
45	http://www.yerkir.am/am/news/49903.htm	12	28	ՀՅԴ թեժ գծին ահազանգում են, որ Շենգավիթ վարչական համայքի Աերացիա թաղամասի 169 դպրոցում, ուր տեղակայված է 12/28 ընտրատեղամասը, գործող ավագանու ՀՀԿ-ական անդամ, ներկայումս ավագանու ՀՀԿ ցուցակում ընդգրկված Հայրապետ Հայրապետյանը, խախտելով Ընտրական օրենսգիրքը, մշտապես գտնվում է հանձնաժողովի տարածքում:		12/28 ՏՀՀ նախագահ Օհանյան Գաբրիել	ՏՀՀ նախագահի հաղորդման համաձայն ներկայացվածը չի համապատասխանում իրականությանը: Քվեարկության սենյակում ներկա են բացառապես դրա իրավունքն ունեցող անձինք:

46	http://www.haynews.am/hy/1367754412	1	1	ԸՏ 01/01, Ավան – Ավանի փոխթաղապետ Սամվել Ղումաշյանը խոչընդոտել է ՔՀԻ դիտորդի աշխատանքը՝ փորձելով ձեռքից խլել հեռախոսը, որով դիտորդը նկարում էր, թե ինչպես է Ղումաշյանը մարդկանց ուղեկցում ընտրատեղամաս:		1/1 ՏԸՀ նախագահ Անդրեասյան Էդիկ	Տեղամասային նախագահի հաղորդմամբ միջադեպը տեղի է ունեցել տեղամասային կենտրոնից դուրս, և որևէ առնչություն չունի տեղամասում անցկացվող քվեարկության հետ:
47	http://www.epress.am/2013/05/05/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1.html	2	8	2/08 տեղամասում (Նոր Նորքի 4-րդ զանգված) ընտրելու եկած բնակիչը հայտնաբերել է, որ իրենց բնակարանի վրա հաշվառված են մարդիկ, որոնց չի ճանաչում: Օպերատիվ արձագանքման խումբը և «Հայկական Ժամանակի» լրագրողը մեկնել են տեղամաս: «Բարեւ Երեւան» դաշինքի վստահված անձի խնդրանքով քաղաքացին սպասում է օպերատիվ արձագանքման խմբին: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է «Ժառանգության» քարտուղար Ստյոպա Սաֆարյանը:			ԸՕ-ով սահմանված կանոնակարգումների համաձայն ընտրողների ցուցակները կազմում և վարում է լիազոր մարմինը: Ընտրողների ցուցակները ԸՕ-ով սահմանված կարգով հրապարակայնացված են եղել: Ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու կարգը և պայմանները բազմիցս պարզաբանվել են:
48	http://www.mamul.am/am/news/35871/	7	15	Ի թիվ այլ խախտումների՝ ՀԱԿ-ից հայտնում են, որ 07/15 ընտրատեղամասից 10 մետր հեռավորության վրա գտնվող ավտոտնականման կառույցում, որն ամբողջովին պատված է Տարոն Մարգարյանի պաստառներով, մի խումբ երիտասարդներ՝ «թաղի տղաներ», տատիկ-պապիկների հետ մտնում են ներս, որից հետո, ծերերին ներկայացնելով որպես անտառաճանաչների, գնում են ընտրատեղամաս և նրանց հետ միասին քվեարկում: Երբ դիտորդը տեսախցիկով մոտենում է ավտոտնակին, դուռը փակում են ու թաքնվում դռան հետևում: Իսկ քվեարկողները դուրս գալուց առաջ հանձնաժողովի անդամ ոմն տիկին Սևիլ Պապոյանին ասում են՝ «մեր պարտքն արեցինք»: Տարածքի ոստիկանները հաղորդում են, որ անզոր են ցրել ՀՀԿ-ի «շտաբի» մոտ առաջացած այդ կուտակումները:			ԸՕ-ի 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: ԿԸՀ-ի կողմից ուսումնասիրվել է նշված 7/15 տեղամասի վերաբերյալ համացանցային կայքում տեղադրված տեսանյութը, ըստ որի նշված տեղամասում քվեարկության կարգի խախտման փաստ առկա չէ: Ինչ վերաբերում տեղմասային կենտրոնի տարածքում առկա կուտակումներին, ապա ԸՕ-ի հիշյալ պահանջի կատարումը վերապահված է ՀՀ ոստիկանությանը և վերջիններս այն պետք է կատարեն անկախ ՏԸՀ-ի պահանջից: Սակայն ՏԸՀ նախագահը տեղեկացվել է այդ մասին և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

49	http://www.1in.am/arm/armenia_politics_181432.html	3	17	3/17 ընտրատեղամասում խոչընդոտում են «Բարև Երևան» դաշինքի ներկայացուցիչ Վիգեն Դավթյանի բնականոն աշխատանքը: Դիտորդական առաքելության ներկայացուցիչը սպառնում է, որը ըստ երևույթի դիտորդական առաքելություն իրականացնող ՀՀԿ-անդամ է:		ՏՀՀ նախագահ Բատիկյան Արեգ	Ներկայացված հաղորդումը ուսումնասիրման փուլում է:
50	http://168.am/2013/05/05/220646.html	7	28	7/28 տեղամասում ժամը 16:30-ի սահմաններում իրարանցում էր: «Իրավունքի Եվրոպա միության» դիտորդ Միեր Արշակյանը լարված վիճակում ներս մտնելով ընտրատեղամաս՝ արհամարհական և կոպիտ ձևով անձնագիրը շպրտեց քարտուղարի սեղանին, որպեսզի գրանցվի, ինչի արդյունքում խառնվեցին դիտորդներն ու վստահված անձինք: Առաջացավ վիճաբանություն՝ խաթարելով ընտրությունների բնականոն ընթացքը:		7/28 ՏՀՀ նախագահ Օսմանյան Ծովինար	Լուրը համապատասխանում է իրականությանը, հանձնաժողովի բոլոր անդամները հաստատեցին , որ երիտասարդը իրեն վատ է պահել: Դեպքը արձանագրվել է հանձնաժողովի կողմից:
51	http://www.asparez.am/	8	28	08/28 տեղամասում՝ թիվ 91 դպրոց, Ախպարաշեն գողացել են Թրանսփարեսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի դիտորդ Արման Ալեքսանյանի տեսախցիկը այն բանից հետո, երբ վերջինս այն մեկ րոպեով դրել է սեղանին:		Նախագահ Խանյան Սամվել	Երիտասարդը թյուրիմացաբար դրել է այլ տեղ, որը հետո գտել է:
52	http://www.1in.am/arm/armenia_politics_181457.html	1	34	1/34, Ավան – Համահայկական երիտասարդական ասոցիացիա կազմակերպության 2 դիտորդ միաժամանակ գտնվում է ընտեղամասում:		Նախագահ Ռուզաննա Առաքելյան	Քարտուղարը թյուրիմացաբար չի գրանցել 1-ին դիտորդի դուրս գալու ժամը, որը պատճառ է դարձել մտածել, որ տեղամասում 2 դիտորդ միաժամանակ են գտնվում:
53		13	5	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը հայտնում է, որ 13/05 տեղամասում (№ 70 դպրոց, Սարի Թաղ) ԲՀԿ-ական ավագանու թեկնածուն բազմաթիվ անգամ մուտք է գործել ընտրատեղամաս՝ առանց համապատասխան գրանցման:		նախագահ Հեղնար Բերբերյան	ըստ նախագահի տեղեկատվության կազմվել է արձանագրություն
54	http://operativ.am/?p=16127	1	27	Ղարաբաղցին քվեարկել է 1/27 ընտրատեղամասում, ստորագրել ուրիշի փոխարեն ու գնացել գյուղ		ՏՀՀ 1/27 նախագահ Խաչատրյան Հերմինե	ՏՀՀ նախագահը տեղեկացրեց, որ շփոթմունք է եղել, ընդամենը ներկայացված անձանց տվյալները սխալմամբ լրացվել են հակառակ տողերում:

55	http://www.asparez.am/news-hy/yerevan-19-20/	13	11	13/11 տեղամասում՝ թիվ 16 դպրոց, Բուռնազյան փ., խոչընդոտել են դիտորդի եւ լրագրողի աշխատանքը: Հանձնաժողովի անդամները խտրական վերաբումունք են ցուցաբերում:		նախագահ Սարգսյան Անժելա	ՏՀՀ նախագահի փոխանցմամբ ոչ թե հանձնաժողովն է խոչընդոտել աշխատանքին,այլ դիտորդը: Նշված միջադեպի կապակցությամբ քարտուղարի կողմից կազմվել է արձանագրություն:
56	http://www.asparez.am/	7	14	07/14 տեղամասում՝ թիվ 80 մանկապարտեզ, Հաղթանակ, ՀՀԿ վստահված անձ՝ Սուրիկ Հայկազի Վարդանյանը ահաբեկում և սպառնում է դիտորդ Նաիրի Մաթեւոսի Հախվերդուն:		նախագահ Պողոսյան Առնակ	Միջադեպը տեղի է ունեցել,ինչը նաև հարթվել է: Դեպքի կապակցությամբ կազմվել է արձանագրություն:
57	http://www.asparez.am/	8	10	08/10 ընտրատեղամասում՝ թիվ 97 մանկապարտեզ, Ա-3 թաղամաս, ներկա են դիտորդներ, ում մոտ եղած դիտորդական կազմակերպության վկայականները պատճենի տեսքով են: Դրա մասին Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի դիտորդը ահազանգել է հանձնաժողովի նախագահին, սակայն նա հրաժարվել է մեկնաբանել կամ գրանցել փաստը:		քարտուղար Գրիգորյան Արտյոմ	Միջադեպը գրանցվել է, սակայն հանձնաժողովի քարտուղարը նրան դուրս է հրավիրել, հետևապես՝ խախտում չկա:
58	http://www.asparez.am/	8	6	08/06 տեղամասում՝ թիվ 90 դպրոց՝ Բատիկյան փ., այլեւս ընտրող չկա, հանձնաժողովի անդամները բոլորի աչքի առաջ ցուցակներում ստորագրում են ընտրությունների չեկած ընտրողների փոխարեն:		նախագահ Էրիկ Ավագյան, ԲՀԿ վստահված անձ Հրաչ Մկրտչյան ՀԱԿ վստահված անձ Գևորգյան Հայկ	Ըստ հանձնաժողովի նախագահի, անդամների, ինչես նաև վստահված անձանց փոխանցմամբ՝ նշված տեղեկատվությունը անհիմն է ու չի համապատասխանում իրականությանը:
59	http://www.asparez.am/	7	15	07/15 տեղամասում՝ գյուղխորհրդի շենք, Հաղթանակ փ., անընդհատ ավտոբուսներով ընտրողների են տանում-բերում, հիմնականում տարեց կանաց եւ տղամարդկանց, որոնք դժվարությամբ են տեղաշարժվում: Տեղամասի ներսում սաստիկ կուտակումներ են, 15 ընտրողից շատ ավելի մարդ կա քվեասենյակում, տարեցներին բերողները ուղեկցում են քվեախցեր՝ եւ օգնում են քվեարկել: Հանձնաժողովի նախագահը կամ չի կարողանում կամ չի ուզում օրենքով սահմանված կարգն ապահովել տեղամասում:		նախագահ Սամվել Զախարյան	Այն, որ ընտրողներին ավտոբուսով են տեղափոխում նախագահը տեղեկացրեց,որ ինքը տեղեկություն չունի, թե ընտրողները ոնց են գալիս, իսկ այն որ տեղամասի մոտ և քվեարկության սենյակում կուտակումներ կան՝ ասեց, որ իրականությանը չի համապատասխանում, կարող են գալ ստուգել:

60	http://www.asparez.am/	7	31	07/31 տեղամասում՝ թիվ 6 ուսումնարան, քվեարկության խցերից ընտրողները դուրս են գալիս, առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու: Հանձնաժողովի նախագահին զգուշացնելուց հետո, խախտումը վերացվել է:		նախագահ Սերգեյ Աղաբաբյան	Ներկայացվածը մեկ եզակի դեպք է, որը կանխվել է ՏԸՀ -ի կողմից
61	http://www.asparez.am/	8	28	08/28 տեղամասում՝ Ախպարաշեն, թիվ 91 դպրոց, դիտորդին արգելվում է ազատ տեղաշարժը ու դիտարկումը ընտրատեղամասում: Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Խանյան՝ ՀՀԿ: Այս մասին Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը 09:59-ին էլեկտրոնային բողոք է ուղարկել ՀՀ ԿԸՀ նախագահին		նախագահ Սամվել Խանյան ՕԵԿ-ի անդամ Մարգարիտա Խաչատրյան, ՀԱԿ-ի անդամ Կարինե Մուրադյան	ԸՕ-ի 31-րդ հոդվածով սահմանված են դիտորդների իրավունքները: Ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, ուղղակի դիտորդը պարբերաբար իր տեղաշարժով խանգարել է հանձնաժողովի աշխատանքներին և նախագահը խնդրել է իր իրավունքներն իրականացնել այնպես, որպեսզի չխանգարի հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության բնականոն ընթացքին
62	http://www.asparez.am/news-hy/yerevan-9-10am/	8	4	08/04 տեղամասում՝ 116 դպրոց, Արարատյան զանգված, միաժամանակ գտնվում են ՀՀԿ երկու վստահված անձինք		նախագահ Սամվել Խանյան, ՕԵ	իրականությանը չի համապատասխանում ՏԸՀ ներկա են յուրաքանչյուր թեկնածուի մեկական վստահված անձ
63	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	1	31	ԸՏ 1/31, Նոր նորք – ՔՀԻ դիտորդը ցանկացել է մուտք գործել ընտրատեղամաս դիտորդություն իրականացնելու համար: Հանձնաժողովի նախագահ Գարեգին Ներսիսյանը դիտորդական վկայականից բացի պահանջել է "լիցենզիա":		նախագահ Գարեգին Ներսիսյան	նախագահը տեղեկացրեց, որ դիտորդը քվեարկության սենյակ մուտք է գործել մեկ վկայականով: ԸՕ-ի 44-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն տեղական դիտորդը քվեարկության սենյակում ներկա լինելու համար պետք է ներկայացնի երկու վկայական՝ տեղական դիտորդի և որակավորման
64	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	5	11	05/11 Դավիթաշեն, Թիվ 192 դպրոց – ՔՀԻ դիտորդը հայտնում է, որ ոստիկանության աշխատակիցները նստում են ընտրատեղամասերի միջև գտնվող սենյակում: Այդ սենյակ մտնելիս կամ սենյակից դուրս գալիս՝ ոստիկաններն անցնում են քվեարկության սենյակներով: Վերջիններս նաև շրջում են քվեարկության սենյակներում՝ թեև հանձնաժողովի նախագահը նրանց չի հրավիրել տեղամաս		նախագահ Ալվարդ Պողոսյան, դիտորդ Գեղանուշ Թումասյան	ընտրողների հոսքը առաջացրել կուտակումներ, սակայն ոստիկանի օժանդակությամբ խնդիրը կարգավորվել է

65	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	11	8	11/08, Էրեբունի - Ընտրողներից մեկը պահանջել է, որ իրեն այլ քվեաթերթիկ տրամադրվի և իր կողմից փչացրած քվեաթերթիկը մարվի: Հարակից ը/տ-ից եկել է հանձնաժողովի նախագահը և երկարատև քննարկումներից հետո ընտրողին տրամադրել են նոր քվեաթերթիկ, իսկ փչացրած քվեաթերթիկը մարվել է: Նույն ընտրատարածքում նաև նկատվել են կուտակումներ. քվեարկության սենյակում եղել է մոտ 20 ընտրող:			
66	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	1	4	01/04, Ավան - ՔՀԻ-ի դիտորդը հաղորդում է, որ մի երիտասարդ պարբերաբար մտնում է ընտրատեղամաս և հանձնաժողովի նախագահի հետ զրուցելուց հետո, ընտրատեղամաս է ուղեկցում մի խումբ ընտրողների:		նախագահ Գոհար Էգնատոսյան, ԲՀԿ-ի վստահված անձ Նոնա Վարդերեսյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ նշված տեղեկատվությունը հերուրանք է, չի համապատասխանում իրականությանը
67	http://www.asparez.am/	13	6	13/06 տեղամասում խախտվել է քվեարկության գաղտնիության պահանջը:		նախագահ Եպրաքսյա Ադամյան, ՀՅԴ-ի վստահված անձ Գերասիմ Վարդանյան	չի համապատասխանում իրականությանը նշված տեղամասում քվեարկությունը ընթանում է ԸՕ-ի պահանջներին համապատասխան
68	http://www.asparez.am/	7	14	07/14 տեղամասում՝ թիվ 80 մանկապարտեզ, կողմնակի անձինք կան ու կուտակումներ:		նախագահ Առնակ Պողոսյան	ընտրողների հոսքը առաջացրել է կուտակումներ, սակայն ոստիկանի օժանդակությամբ խնդիրը կարգավորվել է
69	http://www.asparez.am/	7	13	07/13 տեղամասում՝ թիվ 176 դպրոց, Ա-1 թաղամաս, գրանցվել է կրկնակի քվեարկության 4-րդ դեպքը		նախագահ Սպարտակ Մկրտչյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ տեղմասում գրանցվել է մեկից ավելի քվեարկելու փորձի միայն մեկ դեպք, որը կանխվել է, փաստն արձանագրվել է ՏԸՀ-ի կողմից, այնուհետ ՏԸՀ նախագահը տեղեկացրել է ոստիկանության ծառայողներին
70	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	1	20	ԸՏ 01/20, Ավան – ՔՀԻ դիտորդը հայտնում է, որ Ավագանու անդամի թեկնածուն պարբերաբար դուրսուներս է անում: Նույն տեղամասում դիտորդներից մեկը դիտորդի վկայականի փոխարեն ներկայացրել է դրա պատճենը:		նախագահ Նազիկ Հայրապետյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ տեղմասային կենտրում ներկա են միայն դրա իրավունքը ունեցող անձին և "Դուրսուներս" է արել դիտորդը, որը դուրս է գալիս ծխելու: Ինչ վերաբերում է վկայականի պատճենը ներկայացնելու փաստին, ապա դիտորդը իրոք սկզբում ներկայացրել է պահանջվող վկայականի պատճենը, սակայն ՏԸՀ պահանջով, որոշ ժամանակ անց, ներկայացրել է վկայականի բնօրինակը

71	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	5	32	ԸՏ 05/32, Արաբկիր – ՀՀԿ-ի ներկայացուցիչները բողոքում են, որ լցոնում է տեղի ունենում:		նախագահ Հակոբ Դաշյան, հանձնաժողովի անդամ ՀՀԿ-ից Ռիմա Ստեփանյան	չի համապատասխանում իրականությանը
72	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	8	9	ԸՏ 08/09, Մալաթիա–Սեբաստիա – Գրանցվել է կրկնակի քվեարկության դեպք՝ միևնույն անձնագրով։Հանձնաժողովի անդամները չեն ընդունում դիտորդի դիտարկումը, փաստը գրանցամատյանում չի արձանագրվել։		նախագահ Նարինե Շահբազյան,հանձնաժողովի քարտուղար ՀՅԴ-ի ներկայացուցիչ Անուշ Շիրվանյան	ՏՀՀ-ից տեղեկացրեցին, որ միջադեպը կանխվել է, ՏՀՀ գրանցամատյանում փաստի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, իսկ քվեաթերթիկը ԸՕ-ով սահմանված կարգի համաձայն անհապաղ մարվել է
73	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	5	7	ԸՏ 05/07, Դավիթաշեն - Հանձաժողովի անդամներն ու նախագահը չեն փակցրել վկայականներն իրենց վրա: Նույն ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահը ընտրատեղամասից դուրս է եկել:			չի համապատասխանում իրականությանը
74	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	6	34	6/34, Աջափնյակ – Հանձնաժողովի անդամներից մեկը հարբած է։		նախագահ Գևորգ Հարությունյան, հանձնաժողովի բոլոր անդամներ	չի համապատասխանում իրականությանը
75	http://www.asparez.am/	8	8	08/08 տեղամասում ՀՀԿ-ից Երեւանի Ավազանու թեկնածության անդամ Գեւորգ Մանուկյանը վստահված անձի վկայականով խոչընդոտում էր լրագրողների եւ դիտորդների աշխատանքին: Վերջինս ՀՀ ԱԺ պատգամավոր Մանվել Գրիգորյանի վճարովի հիմունքներով աշխատող օգնականն է, ԵՊՀ դասախոս		նախագահ	
76	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	1	18	Երևանում հաշվառում չունեցող անձը ցանկանում է քվեարկել։		նախագահ Արման Եդոյան	նախագահը թույլ չի տվել ընտրողին քվեարկել, քանի որ հաշվառում չի ունեցել անձնագրում
77	http://hra.am/hy/events/2013/05/05/elections	6	15	ԸՏ 6/15, Աջափնյակ – Քվեախցիկի հետևի մասում հայելի է փակցված եղել, ինչը կարող է խախտել քվեարկության գաղտնիությունը։ ՔՀԻ դիտորդի միջնորդությամբ թուղթ են փակցրել հայելու վրա։		նախագահ Աննա Մարտիրոսյան	Հանձնաժողովի նախագահը պարզաբանեց, որ հայելին կախված է եղել բավականաչափ հեռու քվեախցից և դիտորդի միջնորդությամբ թուղթ են փակցրել հայելու վրա
78	http://www.galatv.am/news/view/barev-erevan_05.html	11	33	Քաղաքացին ահազանգում է, որ 75 դպրոցում տեղակայված 11/33 եւ 11/34 տեղամասերում քվեարկել են արտասահմանում գտնվող քաղաքացիների փոխարեն:		Թիվ 11/33 ՏՀՀ Նախագահ Մեխակ Համբարյան,ՀԱԿ վստահված անձ Լիլիթ Մամիկոնյան	Չի համապատասխանում իրականությանը

79	http://www.galatv.am/news/view/barev-erevan_05.html			«Առավոտ» թերթի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանը տեղեկացնում է, որ 6/23 տեղամասում հանձնաժողովի անդամների դիմաց ցուցակներով կանգնած անհայտ անձինք հետեւում են ընտրողներին: Հռիփսիմե Ջեբեջյանին խոչընդոտել են նկարահանել այդ գործընթացը:25. 15:30. Hetq.am-ի փոխանցմամբ՝ 7/15 տեղամասում առկա են կուտակումներ քվեատուփի եւ ընտրացուցակների մոտ: Հանձնաժողովի նախագահը դիտորդին սպառնացել է, որ տեսախցիկը նրա ձեռքից կվերցնի, եթե շարունակի նկարել: Տեղամասից դուրս եւս մեքենաների կուտակումներ են, իսկ ոստիկանները մտադրություն չունեն հեռացնել մեքենաները տարածքից:		Ընտրական օրենսգիրք	ԸՕ-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից:
80	http://www.galatv.am/news/view/barev-erevan_05.html			12/35 ընտրատեղամասում հանձնաժողովի ՕԵԿ-ական նախագահը, փայլուն իմանալով Ընտրական օրենսգրքի պահանջները, փորձում էր «Առաջին լրատվական»-ին վստահեցնել, որ միևնույն ընտրատեղամասում մի լրատվամիջոցից և՛ լրագրող, և՛ օպերատոր չի կարող գտնվել. «Օպերատորը թող նկարի, եթե հարցեր ունենա, թող տա: Դուք ստեղ անկապ ֆռում եք»:		նախագահ Վոլոդյա Հովհաննիսյան, Ժառանգություն կուսակցության հանձնաժողովի անդամ Հասմիկ Հակոբյան	տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը
81	http://www.galatv.am/news/view/barev-erevan_05.html			Անահիտ Բախշյանն ահազանգում է, որ 7/1 և 7/3 տեղամասերի հանձնաժողովների «Ժառանգության», ՀԱԿ և Դաշնակցության հանձնաժողովականներին 099 200010 հեռախոսահամարից զանգահարել է մեկը՝ ներկայանալով որպես հանձնաժողովի նախագահ, ու ասել, որ հանձնաժողովի բոլոր անդամներն արդեն գործարքի են գնացել ՀՀԿ-ի հետ, մնում է միայն ինքը: Պարզվում է, որ այդ հեռախոսահամարը Սամվել Ալեքսանյանի քրոջ տղա Վարդանինն է:		թիվ 7/1 ՏՀՀ նախագահ Ասրյան Վահագն, ՏՀՀ-ում ՀԱԿ անդամ Աննա Ավագյան, 7/3 ՏՀՀ-ում Ժառանգ. կուս.անդամ Մարզպեպ Գասպարյան, 7/3 ՏՀՀ-ում ՀԱԿ անդամ Արայիկ Ավագյան 7/3 Ժառանգ.կուս. վստահված անձ Թելման Մկրտչյան	Ներկայացված տեղեկատվությունը ճշգրտվեց թիվ 7/1 և 7/3 ՏՀՀ ներում հաղորդման մեջ մատնանշված անձանց հետ, որոնցից 7/1 ՀԱԿ անդամ Աննա Ավագյանը հայտնեց, որ իրենց հանձնաժողովի նախագահը իրեն չի զանգել թյուրիմացություն է տեղի ունեցել, իրենց այլ անձ է զանգել, ինչի մասին ինքը հայտնել իրենց կուսակցասպարյանը հայտնեց, որ իրենց ոչ ոք, ոչ այսօր, ոչ երեկ չի զանգել նշվածը չի համապատասխանում իրականությանը: 7/3 ՏՀՀ ՀԱԿ անդամ Արայիկ Ավագյանը հայտնեց, որ իրեն չեն զանգել: Միաժամանակ 7/1 և 7/3 ՏՀՀ նշված անդամները հայտնեցին, որ իրենց մոտ քվեարկությունը ընթացել է բնականոն հունով, 19:55- դրությամբ որևէ միջադեպ կամ խախտում չի արձանագրվել:

82	http://www.galatv.am/news/view/barev-erevan_05.html	6	34	«Բարեւ Երեւան» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Գեւորգ Մարտիրոսյանն ահազանգում է, որ 6/34 տեղամասում Մարատ Հովհաննիսյանի փոխարեն քվեարկել է ոմն Գուրգեն Արեգյան:		6/34 ՏՀՀ նախագահ Հարությունյան Գևորգ	ՏՀՀ նախագահը տեղեկացրեց, որ շփոթմունք է եղել, ընդամենը ներկայացված անձանց տվյալները սխալմամբ լրցվել են հակառակ տողերում: ՏՀՀ նածագահը հայտնեց, որ դա տեղամասում եզակի դեպք է եղել
83	http://www.1in.am/arm/armenia_politics_181494.html	12	35	12/35 ընտրատեղամասում հանձնաժողովի ՕԵԿ-ական նախագահը, փայլուն իմանալով Ընտրական օրենսգրքի պահանջները, փորձում էր «Առաջին լրատվական»-ին վստահեցնել, որ միևնույն ընտրատեղամասում մի լրատվամիջոցից և՛ լրագրող, և՛ օպերատոր չի կարող գտնվել. «Օպերատորը թող նկարի, եթե հարցեր ունենա, թող տա: Դուք ստեղ անկապ ֆռում եք»:			Տեղեկատվությունը կայքում տեղադրվել է 20:08-ին,ԿՀՀ-ը ժամը 20:17-ի դրությամբ ահազանգել է տեղամասային հանձնաժողով և մեկ անգամ ևս բացատրվել ԿՀՀ որոշմամբ սահմանված կարգը, համաձայն որի յուրաքանչյուր ԶԼՄ-ից ընտրական հանձնաժողովների նիստերին կարող են ներկա լինել 1 թղթակից և 1 օպերատոր: Իրավիճակը հարթվել է: